ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ՀԱՃՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30-ը սեպտեմբերի 2011թ. N 24
Քաղաք Նոր Հաճն

ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ ԱՐՍԵՆ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ ԿԱՐԻՔԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի N 947-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով բնակարանային հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ Նոր Հաճնի քաղաքային համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Նորհաճնցի զոհված ազատամարտիկ Արսեն Արամայիսի Սարգսյանի ընտանիքը Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» N 947-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի համաձայն ճանաչել կարիքավոր ընտանիք, քանի որ ընտանիքին սեփականության իրավուքով պատկանող բնակարանը բաղկացած է երկու սենյակից, համատեղ բնակվում են են չորս անձիք, որոնցից երկուսը չափահաս տարբեր սեռի երեխաներ են:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին դիմել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն՝ Արսեն Արամայիսի Սարգսյանի կարիքավոր ընտանիքը բնակարանային հաշվառման վերցնելու և բնակարանային պայմանները բարելավելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու համար:

Ավագանու անդամներ՝	կողմ	դեմ	ձեռնպահ
Գ. Մաթևոսյան՝			
Կ. Հարությունյան՝			
Կ. Գևորգյան՝			
Կ. Ապրեսյան՝			
Ա. Գևորգյան՝			
Կ. Միրզոյան՝			
Գ. Մխիթարյան՝			

Քաղաքապետ՝ Գ. Մաթևոսյան